Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2025թ. մայիսի 8-ի N 168 - Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի մայիսի 28–ից

«15% idcoin երեխաների տոնին» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 28.05.2025թ-ից 15.06.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **QR վճարում՝** «Իդրամ» ՍՊԸ (այսուհետ՝ Իդրամ) սպասարկման ցանցում ֆիզիկական անձանց կողմից Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) իրականացված QR վճարում (այդ թվում NFC, QR տեխնոլոգիայով և առցանց կայքերում կատարված QR վճարումները):
1.3 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.4 **Հաճախորդ՝** ցանկացած օգտատեր, ով կիրականացնի Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) QR վճարում ստորև ցանկում ներառված մանկական զվարճանքի կենտրոններում:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում Հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի: Մասնակցելով արշավին և ընդունելով idcoin-ները «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդ չհանդիսացող անձինք տալիս են իրենց համաձայնությունը իրենց անձնական տվյալները՝ եկամտահարկի հաշվարկման և վճարման նպատակով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին փոխանցելու համար:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում, 28.05.2025թ-ից 15.06.2025թ-ը ներառյալ, Հաճախորդները կստանան 15% ակնթարթային idcoin (ներառյալ հարկերը) կատարելով QR վճարումներ մանկական զվարճանքի հետևյալ կենտրոններում՝

- Երևան Պարկ
- Հաղթանակ զբոսայգի
- Նավապետ Քիդի գանձերի կղզի – Երևան Մոլ
- Մեջիք Լենդ (Magic Land) - Էրեբունի Մոլ
- Մեջիք Լենդ (Magic Land) - Մեգա Մոլ
- Մեջիք Լենդ (Magic Land) - Մաշտոց 5
- Փլեյ Լաբ (Play Lab) – Դալմա Գարդեն Մոլ
- Գեյմ Լաբ (Game Lab) – Ռիո Մոլ
- Ալբի Լենդ (Alby Land) – Հոմպլեքս Մոլ (գործարկումից հետո)

2.2 QR վճարման դեպքում idcoin-ի ստացման համար հիմք են ընդունվելու բանկային հաշիվներով, կից քարտերով, դրամապանակով, idplus կուտակված բոնուսներով/նվեր քարտերով, idcoin-ով, կոմբո տարբերակով, rocket line/rocket line 0%-ով կատարված վճարումները:
2.3 Մեկ հաճախորդին սույն Արշավի ընթացքում տրամադրվում է հանրագումարային առավելագույնը 5 000 idcoin (հարկումից հետո): Փաստացի ստացման ենթակա idcoin-ը Հաճախորդին տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 20% եկամտահարկի գանձումից հետո: Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի կողմից:
2.4 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.5 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: